Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Գոհիսոկհիկների գործակցության
դաշտային աշխատանքների
ծրագիրը.

338.14
Կ-64

2 2 MAY 2013

30 JUL 2010

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

(ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՈՇՈՒՄԸ)

Թարգմ. Հ. Մ.

ԳԻՆՆ Ե 3 ԿՈՊԵԿ

ԱԶԳԱՅԻՆ ՖՈՒՐԱՄԱՍՆՈՒԹԻՈՒՆՆԵՐԻ
ՀԵՌԻՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՅԼ. - ԴՈՒՆ

931 p.

15180-57

Программа весенних полевых работ в колхозах

На армянском языке

СЕВКАВКРАЙНАЦИЗДАТ

Ростов н-Д Крайлит № А-738 Газетно книжн. тип. СККПО
заказ № 775 тираж 1500

338.1
Ա-64

Բոլշևիկյան առաջին կոլխոզային գարնան պրակտիկան, հսկայական նվաճումների հետ միասին, հայտաբերեց նաև թերություններ առանձին կոլխոզների աշխատանքներում։ Ահա այդ թերությունները.—անբավարար պատրաստություն գարնանացանին, ցանքի և բերքահավաքման վաղորոք կազմած աշխատանքային պլանի բացակայություն, կոլխոզնիկների աշխատանքի, լծկան ուժի և ինվենտարի վոչ հմուտ դասավորություն, լծկան անասունների սակավ ոգտագործում, աշխատանքի դիսցիպլինայի և վորակի թուլություն։

Անցյալ գարնան ամենամեծ թերությունը, վորն ինչպես ել լինի, պետք է վերացնել, հետևյալն եր.—մի շարք ռայոններում գործադրվում եր շնչերի համեմատ բերքը բաժանելու սկզբունքը։ Այս բանի շնորհիվ մարդիկ, վորոնք չեյին ցանկանում աշխատել, վորոնք կոլխոզ եյին մտել նրա համար, վորպեսզի ոգտվեն հասարակական աշխատանքի արդյունքներից,—այսպիսի մարդիկ ստանում եյին նույն յեկամուտը, ինչ վոր կոլխոզնիկները, վորոնք քրտնաթոր աշխատում եյին։ Այսպիսով վիժում եր աշխատանքի ճիշտ կազմակերպումը։

Կոլխոզկենտրոնը բերքը շնչերի համեմատ բաժանելը համարում է վորպես կուլակների ու յենթակուլակների ազդեցության արտահայտություն, վորոնք կաշուց դուրս են գալիս կոլխոզներում սահմանել այնպիսի կարգ, վորը խանգարեր այնտեղ աշխատանքի ուղիղ կազմակերպման և նրա արտադրողականության իրական բարձրացման։

Բոլշևիկյան յերկրորդ կոլխոզային գարնանն այդ պակասությունները վերացնելու համար Կոլխոզկենտրոնը վորոշում է հետևյալը.—

1. Պարտավորեցնել կոլխոզներին՝ տարեկան արտադրական պլանի հիմունքով մշակել գարնանային գյուղատնտեսական աշխատանքների պլան։ Այդ պլանում նախատեսել ցանքի որացույցային ժամկետները, կուլտուրաները ցանելու տեղերը,

կոլխոզնիկների, ինվենտարի, քարշող ույժի որական պահանջվող քանակությունը, սրանց բաժանումը բրիգադների վրա, աշխատանքների ժամանակ կերի, սերմացուների, ախտահանման մատերիալների, տարայի պահանջն և այլն։

2. Աշխատանքային պլանը մշակում է վարչությունը։ Վոչ ուշ, քան դաշտ յելնելուց յերկու շաբաթ առաջ պետք է վերջացած լինի պլանի քննությունը բրիգադների արտադրական խորհրդակցություններում և կոլխոզնիկների ընդհանուր ժողովում։

Կոլխոզներում աշխատանքային պլանները քննելիս և ընդունելիս պետք է քննել նաև կոլխոզնիկների մեջ աշխատանքները բաժանելու, բրիգադիրներ ընտրելու, բրիգադներ կազմելու և նրանց պլանային առաջադրությունները վորոշելու կարգը։ Աշխատանքը ճիշտ բաժանելու, ավելորդ ժամավաճառությունները վերացնելու, առանձին կոլխոզնիկներին սխալ կերպով աշխատանքով բեռնելու, աշխատանքային դիսցիպլինայի համար պայքարելու և մեքենաները ուղիղ գործադրելու հարցերը պետք է լինեն բոլոր կոլխոզնիկների ուշադրության կենտրոնում։ Այդ նույն ժողովներում քննարկվում է թե առանձին կոլխոզնիկների ու բրիգադների և թե իրար մոտ գտնվող կոլխոզների, մեքենա-տրակտորային կայանների ու սովխոզների միջև սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը անցկացնելու կարգը։

3. Յուրաքանչյուր կոլխոզ պարտավոր է.—

ա) Կիրառել հողային ցուցմունքները և վորոշել նոր ոգտագործվող խամ հողերի, յերկարամյա հանգստի թողած հողերի, արոտավայրերը վարելու, խոտհարքների չափը։

բ) Սահմանել կուլտուրաների բաշխումն ըստ աշնանավարի, գարնանավարի, կուլտուրաները ցանելու տեղը և ցանքատարածության չափը։ Կուլտուրաների ցանքը կատարել համատարած մասսիվներով, իսկ յեթե ցանքը մի քանի հողամասերի վրա պիտի լինի,—կուլտուրաները ցանել խոշոր մասսիվներով։

գ) Կոլխոզնիկների հետ միասին մանրակրկիտ քննության յենթարկել ցանքատարածությունների չափը և տեխնիկական կուլտուրաների, կերի, սիլոսային և նոր մտցրած կուլտուրաների զետեղումը դաշտերում, ինչպես նաև քննության առնել

բոլոր պրոպաշնի և տեխնիկական կուլտուրաներին խնամելու և նրանց ժամանակին քաղհանելու կարգը։

Հողային ցուցմունքների կիրառումը հանձնարարել տնտեսությունը գիտեցող կոլխոզնիկների գրուպպային, գյուղատնտեսի մասնակցությամբ։

ՍԵՐՄԱՑՈՒ

1. Սահմանել մի հեկտարի վրա ցանվելիք սերմացուի նորման և վերջնականապես վորոշել, թե կոլխոզը սերմացուի ինչքան պահանջ ունի։

2. Կոլխոզը նոր մտնող տնտեսությունները ընդունելության ժամանակ պարտավոր են մուծել սերմացուի պահանջվող քանակը, համայնացված ցանքատարածության սերմանման համար, ցանքը լայնացնելու հաշվով։

3. Ցանքից յերկու շաբաթ առաջ լիակատար չափով մաքրել և տեսակավորել սերմացուները և ստուգել նրանց աճողությունը։

4. Զոր ախտահանումը կատարել անհապաղ։

5. Պատրաստել սերմացուները թաց ախտահանման համար, ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ ախտահանիչ մատերիալներ, ախտահանման համար պատրաստել և ունենալ անհրաժեշտ պարագաներ (պարկեր, տաշտեր, տակառներ և այլն)։

6. Նոր կուլտուրաների սերմացուները և բարելավված տեսակավոր սերմացուների փոխանակումը կատարել և տեղ հասցնել ցանքի սկզբից յերկու շաբաթ առաջ։ Այդ նույն ժամանակամիջոցում ցանքի համար պահանջվող սերմացուները տեղափոխել հեռավոր հողամասերը։ Վաղորոք հոգալ փափուկ տարա ունենալու համար, կատարել բրեզենտների և պարկերի վերանորոգում և ոգտագործել կոլխոզնիկների տարան։

7. Սերմացուների պատրաստությունը հանձնարարել կոլխոզնիկների բրիգադային, այդ գործին ներգրավելով գյուղատնտեսին։

ԿԵՐԻ ԽՆԴԻՐԸ

1. Անհապաղորեն ստուգել դաշտային աշխատանքների ժա-

մանակամիջոցում լծկանների կերակրման համար առանձնացրած կերի հատուկ ֆոնդերը։

2. Կոլխոզները նոր մանող տնտեսությունները մանելու ժամանակ մուծում են կերի անհրաժեշտ քանակություն, աշխատանքների ամբողջ ժամանակ նրանց համայնացրած անասուններին պահելու համար։

3. Կերը տեղափոխել այն տեղերը, որտեղ անասունները պիտի պահվեն ցանքի ժամանակամիջոցում։

4. Խոցրած և կոշտ կերը ամենալավ կերպով ոգտագործելու և նրանց դյուրամարսելի դարձնելու համար կորատել և մանրացնել ֆուրաժը։

5. Վաղորոք վորոշել ցանքի համար լծված անասունների կանգնելու տեղերը, պատրաստել պահանջվող քանակությամբ կերամաններ և մսուրքներ։

6. Սահմանել անասուններին կերակրելու, կերը և ջուրը դաշտը հասցնելու հաստատուն կարգ։ Նշանակել ֆուրաժի ծախսման համար պատասխանատու կոլխոզնիկներ։ Պրեմիաներ սահմանել կերը խնայողաբար ծախսելու համար, մշակել և խրատորեն գործադրել տուգանման միջոցներ նրանց վերաբերմամբ, վորոնք անասուններին կերակրելու համար կերի կորուստ են թույլ տալիս։

ԼԾԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Դաշտ յելնելուց յերեք շաբաթ առաջ լծկան անասունները բաժանել դաշտային ծանր աշխատանքների համար (վար, ցանք, տափան), ինչպես և թեթև աշխատանքների համար (ցանքում և այլն), հաշվի առնելով աշխատանքի բնույթը, կենդանու ույժն և տաքարյունությունը։

2. Հղի ձիերին ոգտագործել թեթև աշխատանքների համար։

3. Կոլխոզը պարտավոր է լծկան անասուններին պատրաստել այնպես, վորպեսզի նրանք կարողանան օրական աշխատել ճիշտ 12—14 ժամ։

4. Դաշտային աշխատանքներից մեկ ամիս առաջ լծկան անասունները ուժեղ կերպով կերակրվում են։

5. Առանձին բրիգադներում նշանակել հատուկ ձիապան-

ներ, նրանց վրա դնելով լծկան անասունների վիճակի համար պատասխանատվություն և նրանց խնամքը։ Սահմանել տույժերի չափը՝ աշխատանքի ժամանակ լծկան անասունների հետ վատ վարվելու համար։

6. Արգելել ձիերի ոգտագործումն այնպիսի ինվենտարով, վորը լրիվ չափով չի բեռնում ձիերին։

7. Փորձված կոլխոզնիկ ուղարկել տեղական անասնաբուժական կայանը, վորպեսզի սովորի, թե ինչպես վարվել բուժիչ պարագաների հետ և առաջին ոգնություն հասցնել հիվանդացած ու վնասված կենդանիներին։

Գ.-Տ. ԻՆՎԵՆՏԱՐ ՅԵՎ ԼԾԱՍԱՐՔ

1. Ստուգել ինվենտարի վերանորոգման ընթացքը և վերանորոգվածի պետականությունն աշխատանքի համար։

2. Յուրաքանչյուր բրիգադայի համար պատրաստել պահեստի խոփեր, լծափոկեր (պասարոմկաներ), վալիկներ, բարկեր և ձիասարքի պահեստի կոմպլեկտներ։ Բրիգադաներին մատակարարել գործիքներ (բալանիներ, սեղմիչներ, յերկաթալարեր, մուրճեր, բզեր և այլն), տեղում աշխատելու ժամանակ ինվենտարի և լծասարքի մանր վերանորոգումներ կատարելու համար։

3. Վաղորոք լծասարքը հարմարեցնել առանձին ձիերին ու յեզներին, համարակալել և հատկացնել այդ լծասարքը աշխատանքների ամբողջ ժամանակ յուրաքանչյուր կենդանու։

4. Ցանքից յերկու շաբաթ առաջ բրիգադաների վրա բաժանել գյուղատնտեսական ինվենտարը, փոխադրական միջոցներն և ձիերը, համաձայն աշխատանքները կատարելու ժամկետների։ Ամեն մի բրիգադայի, ըստ հնարավորության, միատեսակ մեքենաներ տալ։

ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱԶԼԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Վոչ ուշ, քան դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ կազմակերպվում են բրիգադաներ։

2. Յուրաքանչյուր բրիգադայում կոլխոզնիկների, քարշող ույժի և գյուղատնտեսական ինվենտարի քանակությունը սահմանվում է՝ յելակետ ունենալով մշակույթի նորմաները, աշ-

խատանքի ծավալը և նրա կատարման ժամկետները։ Բրիգադներին հանձնարարվում են թե հատուկ (միայն վար, ցաքան, ցանք) և թե խառն աշխատանքներ, նայած թե ցանքերի մասսիվներն ինչ չափերի յեն և թե ինչքան տարածություն ե ընկած աշխատանքի տեղից մինչև բնակավայրը։

3. Կոլխոզնիկներին բրիգադների վրա բաժանելը կատարվում ե նայած այն հանգամանքին, թե ով և ինչքան վորակավոր ե և ընտելացած ե աշխատանքին։ Բրիգադներում պահվում ե կոլխոզնիկների մշտական կազմ։

4. Աշխատանքներն սկսվելուց յերկու շաբաթ առաջ բրիգադան ստանում ե հաստատուն առաջադրություն, վորտեղ հիշված ե լինում աշխատանքի տեղն ու ժամանակամիջոցը (նարյադ)։ Առաջադրությունները, վորոնք ստացել ե բրիգադան, քննվում են բրիգադայի ընդհանուր ժողովում և սահմանվում ե աշխատանքի չափը բրիգադայում յեղած ամեն մի կոլխոզնիկի համար։ Գործնական աշխատանքում բրիգադան պետք ե ձգտի գերակատարել առաջադրությունը, գործադրելով հանդիպական պլանի, սոցիալիստական մրցության և հարվածայնության մեթոդները, իր վրա վերցնելով աշխատանքային հաստատուն առաջադրություններ։

5. «Բոլոր կոլխոզներում, ժողովներում, բրիգադներում առանձնապես մշակել բերքի բաշխման կանոններն այնպես վորպեսզի հետագայում վերացնել ըստ շնչերի բերքը բաժանելու ամեն տեսակ տարբերը։ Այս տարվա փորձը ցույց ե տվել վոր բերքը բաշխելու այդպիսի սպառողական սկզբունքները վիժեցնում են աշխատանքի ճիշտ կազմակերպումը կոլխոզներում։ Կոլխոզներում աշխատանքի արդյունքներն ըստ աշխատանքի բաշխելու դեմ կանգնած են կուլակային տարրերը, պորտաբույծները, հասարակական աշխատանքի արդյունքներոգտվել սիրողները, վորոնք չեն մասնակցում այդ աշխատանքներին։ Գարնանացանի իրական հաջողության պայմանը հանդիսանում ե այն, վորպեսզի բոլոր կոլխոզներն իսկապես իրագործեն բերքի բաժանումը բացառապես կոլխոզնիկի ու նրա ընտանիքի աշխատանքի քանակի և վորակի համեմատ կատարելու կանոնները։

6. Բոլոր դաշտային աշխատանքները տեղի յեն ունենում գործարքային սիստեմով։ Ցանքից մեկ ամիս առաջ կոլխոզնել վարչությունները սահմանում են աշխատանքի յուրաքանչյուր

միավորի գործարքային գնահատությունը աշխատանքային որերով (վարելու, ցաքանելու, ցանելու և այլն մեկ հեկտարը)։ Աշխատանքի գնահատումները քննարկվում են արտադրական խորհրդակցություններում և հաստատվում կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից, անպայման փակցվում են աչքի ընկնող տեղերում և տրվում են յուրաքանչյուր բրիգադայի։ Բրիգադներին տրվող նարյադներում անպայման մատնանշել աշխատանքի գնահատումը աշխատանքային որերով և այն, թե բրիգադային վորքան աշխատանքային որեր են տրվում կատարվող աշխատանքի համար։ Յեթե բրիգադայում զանազան կվալիֆիկացիայի աշխատողներ կան, վորոնք տարբեր աշխատանքներ են կատարում, ապա սահմանվում ե ա՛յն աշխատանքի գնահատումը աշխատանքային որերով, վոր կատարել ե ամեն մի կոլխոզնիկ։

7. Բրիգադների աշխատանքները ղեկավարելու համար վարչությունը նշանակում ե բրիգադիրներ ամենաակտիվ, փորձված կոլխոզնիկ—հարվածայիններից, վորոնք առաջավորներ են հանդիսանում աշխատանքի կազմակերպման սոցիալիստական ձևերը (սոցմրցություն, հարվածայնություն) գործադրելու առաջարկում, վորոնք հանդիպական պլանների նախաձեռնողներ են և ավել են աշխատանքի վորակի ամենալավ ցուցանիշներ։

ԱԶԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿ, ԴԻՍՑԻՊԼԻՆԱ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱԶԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

1. Կոլխոզի վարչությունը վերահսկողություն ե կազմակերպում առանձին բրիգադների կողմից աշխատանքները ժամանակին կատարելու վրա, ստուգում ե աշխատանքի վորակն և կազմակերպում ե աշխատանքների ընդունելությունը բրիգադիրներից։

2. Դաշտ դուրս գալուց յերկու շաբաթ առաջ սահմանվում ե կատարվելիք աշխատանքների վորակը,—վարի խորությունը, սերմացուների պատրաստումը, ցանելու ճշտությունը և այլն։

3. Սահմանել նյութական պատասխանատվություն, հասարակական ներգործման միջոցներ, տույժերի չափեր վարելու, տաքանելու և ցանելու, վարը չափից դուրս խոր անելու, հո-

դի յերեսին սերմացու թողնելու, ցաքանելիս հողը ջլատելու համար։

4. Աշնանավարի ցաքանումը կատարել, հենց վոր ձյունից ազատվի հողը։ Վորպես կանոն, ցաքանումը կատարել վարի հետ միասին։

5. Ցանքից յերկու շաբաթ առաջ ցանիչները հարմարեցնել ցանելու նորմային և պատրաստ ունենալ ցանիչի համապատասխան մասեր, աշխատանքի ժամանակ ցանող ապարատները կանոնավորապես ստուգելու համար։

6. Կազմակերպել սերմացուների տեղավորումը ցանիչների մեջ այնպես, վորպեսզի տեղավորելու ժամանակ ցանիչը կանգ առնի մեկ-յերկու բոպեյից վոչ ավելի։

7. Պատասխանատվություն սահմանել սերմացուները ժամանակին տեղ հասցնելու և դրանք ցանիչների մեջ տեղավորելու գործի կազմակերպման համար։

8. Աշխատանքը վերջացնելուց հետո կոլխոզնիկները, բրիգադները կանոնավորապես տալիս են նարյադը կատարելու և յուրաքանչյուր կոլխոզնիկի մշակույթի հանրագումարը, որինակ դարձնելով լավագույն մշակույթները, անխնա կերպով մերկացնելով աշխատանքի վորակին վնասողներին։

9. Բրիգադները բաժանել կոլխոզի վարչության անդամների մեջ, անմիջականորեն ղեկավարելու և աշխատանքին հսկելու համար, ինչպես նաև տալ սիստեմատիկ հաշվետվություն բրիգադների առաջ՝ ամբողջ կոլխոզում պլանը կատարելու մասին։

10. Ամեն մի կոլխոզում սահմանել պրեմիաների ֆոնդ այն լավագույն աշխատողներին ու բրիգադներին պրեմիաներ տալու համար, վորոնք պլանը գերակատարում են աշխատանքի ամենալավ վորակով հանդերձ։ Կազմակերպել կոլխոզնիկ—հարվածայինների առաջ քաշումը դեպի ղեկավար և ավելի պատասխանատու աշխատանք։

11. Կոլխոզում սահմանել ամենախիստ դիսցիպլինա, ճշգրտություն՝ աշխատանքի մեջ և յուրաքանչյուրի պատասխանատվություն՝ հանձնարարված աշխատանքի համար, այլ և կոլխոզնիկների ճիշտ նշանակում աշխատանքների ժամանակ։ Լայն կերպով գործադրել աշխատանքի քննումն ու քննադատությունը արտաաշխատանքային ժամերում։ Պարտավորեցնել բոլոր կոլխոզնիկներին բրիգադներում ճշտությամբ կատարել աշխատանքների ժամանակ բրիգադիրների բոլոր կարգադրությունները։

12. Պարտավորեցնել հանրապետական, յերկրային, մարզային և ռայոնական կոլխոզմիությունների կազմակերպել այն միջոցառումների գործնական կիրառման վերահսկողությունն ու ստուգումը, վորոնք ամրապնդում են աշխատանքային դիսցիպլինան, աշխատանքի գործարքային կարգը մշակույթի նորմաների հիմունքով։ Կոլխոզնիկներին մասսայական կերպով պարզաբանել, վոր յեկամուտների բաշխումը պիտի կատարվի բացառապես կատարված աշխատանքի քանակության, վորակի և աշխատած որերի համաձայն։

13. Ռայկոլխոզմիությունները պարտավորվում են կազմակերպել կոլխոզների փոխադարձ ոգնություն։ Ավելի ապահովված, լավագույն կոլխոզները պետք է վոչ միայն կազմակերպչորեն, այլ և արտադրությամբ (աշխատանքի ժամանակ ազատ ձիյեր և ինվենտար հատկացնելը ուրիշ կոլխոզներին և այլն) ոգնություն ցույց տան ավելի թույլ կոլխոզներին, այդ նպատակներով լայն չափով ոգտագործելով հասարակական բուկսիրն ու հասարակական ոգնության մյուս ձևերը։

14) Կոլխոզների վարչությունները յուրաքանչյուր հնգորյակում հաղորդում են ռայկոլխոզմիությանը և գյուղխորհրդին ամեն մի կուլտուրայից արված ցանքերի չափի մասին։

ԱՐՏԵԼԱՅԻՆ ՍՆՈՒԴ

1. Դաշտային աշխատանքների ժամանակվա համար կոլխոզնիկների վորոշմամբ կազմակերպվում է արտելային սնունդ դաշտում, այն մթերքներից, վորոնք մուծում են կոլխոզնիկները։ Յուրաքանչյուր բրիգադայի համար, կամ իրար մոտ աշխատող մի քանի բրիգադների համար նշանակվում է կոլխոզնիկ-արտելչիկ, վորին հանձնարարվում է պարեն մատակարարել բրիգադային և նրա վրա պատասխանատվություն է դրվում սննունդի կազմակերպման համար։

2. Դաշտ դուրս գալուց մեկ շաբաթ առաջ բրիգադներին տրվում են կաթսաներ, դուլյեր (վեդրոներ), դդալներ, բաժակներ և այլ ամանեղեն։

3. Վոչ ուշ, քան աշխատանքներն սկսվելուց յերեք շա-

12242

բաթ առաջ պետք է պայմանավորվել սպառկոոպերացիայի հետ բրիգադաներում առաջին անհրաժեշտության առարկաներ վաճառելու մասին (ծխախոտ, լուցկի և այլ ապրանքներ),—աշխատանքի ամբողջ ժամանակվա ընթացքում։

Կոլխոզկենտրոնի վարչությունն առաջարկում է բոլոր կոլխոզնիկներին հասարակական վերահսկողության տակ առնել դեկավար օրգաններին, ստուգելով նրանց աշխատանքը գարնանացանի նախապատրաստության և կազմակերպման ասպարեզում։ Կոլխոզային լայն մասսաների ներգրավումը դեկավար օրգանների աշխատանքի ստուգմանը, կառավարման մեջ կոլխոզնիկների և կոլխոզուհիների իսկական մասնակցության ապահովումը—այս ամենը հանդիսանում է գարնանացանի առաջադրությունների կատարման կարևորագույն նախադրյալը։

Աշխատանքային ծրագրով նախատեսած բոլոր միջոցառումների պարտադիր իրագործումը, կոլխոզնիկների մոբիլիզացիան՝ գարնանացանի պլանային առաջադրությունների կատարման համար, վճռական պայքարը կոլխոզշինարարության պրակտիկայում աջ ոպորտունիզմի և «ձախ» խոտորումների արտահայտությունների դեմ, պայքարը աշխատանքի բարձր տեմպերի և վորակի համար—կարագացնեն համատարած կոլեկտիվացման ավարտումն և այդ հիմունքով կուլակության վերացումն իբր դասակարգի։

Կոլխոզկենտրոնի վարչությունը վճռականապես պահանջում է բոլոր կոլխոզներից և կոլխոզմիություններից, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկ գիտենա, թե միայն նա, ով պիտի աշխատի, նա պիտի մասնակցի բերքի բաժանմանը, նրա գործադրած աշխատանքի ճիշտ քանակի և վորակի համապատասխան։ Բերքի բաշխման և աշխատանքի կազմակերպման կանոնների վերաբերյալ Կոլխոզկենտրոնի վորոշման համապատասխան, յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքը պիտի գնահատվի բացառապես ըստ աշխատանքային օրերի։

Կոլխոզկենտրոնն առաջարկում է բոլոր կոլխոզնիկներին առանձնապես ուշադիր հետևել այս կանոնի կատարմանը և այն բոլոր դեպքերում, յերբ վորևե մեկը կփորձե վիժեցնել այդ կանոնները, անժիջապես այդ մասին հաղորդել բարձրագույն հողային և կոլխոզային օրգաններին և մամուլին։

ԽՍՀՄ յեվ ՌԽՍՖՀ Կոլխոզկենտրոնի վարչության նախագահ՝ ՑՈՒ բո-

ՀՀ Ազգային գրադարան
NL0286383

30.600